

Փողոցը հավլու՛մ ու լո՛ղ է տալիս,արդեն մի ամիս ինձ դու՛ր ես գալիս

Արդեն մի ամիս անձրև չի՛ գալիս, շոգն անտանելի հանգիստ չի՛ տալիս...

Փողոցը հավլու՛մ ու լո՛ղ է տալիս,արդեն մի ամիս ինձ դու՛ր ես գալիս...

Երեկ մեր շենքի Վանիկ ձյան մահացավ : Լուրը միանգամից տարածվեց ողջ

Մասսիվով ի շնորհիվ շենքի բնակիչների կողմից լիազորված անդամ-

մեկնաբան,Մասսիվում մեր շենքի պաշտոնական ներկայացուցիչ՝ Ալլա ծյոծյայի :

Ալլան իր անձնական պատճառներն ուներ Վանիկի մահվան գույժը տարածելու

համար ու դա նա անում էր մեծ ջանասիրությամբ դռնեդուռ ընկնելով ու ձեռի հետ էլ

միանգամից թաթարախի պսակի փող կպցնելով : Իսկ թե մեկը հանդգներ ու ասեր,որ

“Հիմա մոտս չկա,կլինի՞՞ հետո տամ...” ,Ալլան ռեզկի կպատասխաներ . “Տե՛ս՝ ոնց

կուզես ,պսակի լենտի վրա կգրեմ. “Հարևանների կողմից,բայց Վանիկ

ջան,իմացի՛,Մարգոն փողը չի տվել բնավ” :

Ըստ Ալլայի մեզ հասած տվյալների՝ Վանիկ ձյան անգամ հոգին տալուց

էր իրեն կանչել օգնության: Ասում են ,երբ արդեն Վանիկը բռնել էր մահվան

բռնազբոսիկ ու հեղհեղուկ ուղին, նրա կինն ու երեխաները ասես դավադիտ եղած

Վանիկին որպես հոգս տանելու բեռից՝ նրան արհամարհած են ունեցել ու նենց լավ էլ

կայֆավատ եղել ,իսկ Վանիկը,որը բնավ արժանի չէր նման վերաբերմունքի՝ հույսը

դրել էր Ալլայի վրա,որը ոչ ավել ոչ պակաս քան ներքևի հարևան էր :

Վանիկը սեփական ռոճիկով ապրող, հանրությանը տակավին ոչ մի վնաս չտվող մի

ահավո ը սալապատ արարած էր, որն արդեն հասցրել էր 55 տարին լրանալուն պես

վայելել ծոռ ասվածը : Նա տաքսու վարորդ էր ու հարևանությանը միշտ նիսյա

դեսուդեն էր տանում ՝անկեղծ հույսերով հավատալով, որ մի օր իր դաֆթարի

տետրակը կբարակի փոխարենը հաստանալուն :

Ես սիրում էի Վանիկ ձյային : Մեր լազոդ վախտերով ես ու ախպերս փլեաթեյշընով

հա կռիվ-կռիվ էինք խաղում, ու մի խաղ կար,(անունը հիմա բնավ չեմ հիշում,չնայած

որ հիշեի էլ՝ ոչ մի կերպ այն գիտելիքներիս պոտենցիան չէր ավելացնի) էդ խաղի մեջ

մի հերոս կար, որը չնայած իր քանի տակ ծավված սալերի՝ կուռածիտների հաշվին

կրում էր սաղին : Մենք միշտ ասոցացնում էինք Վանիկին էդ կերպարի հետ , ու դեռ

խաղը չսկսած՝ ջոսճիկի կնոպկեքի վրա արագ-արագ անկապ շարժումներ էինք

անում՝ ասես ամենքս ձգտելով Վանիկ ձյային յուրացնել :

Մի շոգ կիրակի ու մի մե՛ծ դագաղ տանում են մարդիկ փողոցով երկար,և նրանց

հոգնած ու բուրձ դեմքերից ճանճերը կպնում ու պոկ չե՛ն գալիս,ճանճերը կպնում ու

պոկ չե՛ն գալիս...

Օ ինե՛ղ՝ Վանիկ ձյա՛,պառկած դագաղում ,դու էլ ես ինձ պես շոգից տառապում,

մինչդեռ քո հոգին՝ իմ հոգու նման, օտար ափերում անձրև է փնտրու՛մ,օտար

ափերում անձրև է փնտրու՛մ...

Հավաքվածները շատ էին. հարևան շենքերից,գյուղերից տարբեր, անգամ

Մոսկվաներից էլ էին եկել Վանիկին հրաժեշտ տալու:

Նողկալի տապը բացահայտում էր մարդկանց առանց այն էլ պրիմիտիվ դեմքերի

իրական արտահայտությունը:

Շենքի մուֆթըչի Արսենչոն առավոտվանից շրջում էր շենքով և իր սավալը

բավարարելու նպատակով ամենփից մի մի, ու թե կա մեկը ով կարա երկու պապիռոզ խնդրում : Գոհ էր Արսենչը, ահագին հավաքվեց, մի բոլ կծխի...

Մառա ծյոծյան, որը չգիտեմ ինչ առիթով նախանցած տարի հազել էր Վանիկի հետ ու ստիպել իր յեթյա որձ զավակին ծեծել հարիֆ Վանիկին, ևս ներկա էր : Նրա ակտիվ քրտնագեղձերը երկու անհուն ու անեզր լճակներ էին գոյացրել թների ներքո ,ու ո՞վ գիտի ,թե ինչպես էր Մառան այդ շոգին բուրում : Զգացվում էր, որ Մառան կկամենար մոտենալ դիակին ու մեղմիկ շշնջար նրան . “Տա՛ր քեզ հետ չոռս ու ցավերս, Վա՛ն, մենակ լավը թող մնա ինձ մոտ” , սակայն մի ներքին ձայն ասես նրան նամիկատ էր անում. “Այ կնիկ, բա՛ որ ֆոռա ու ասի՝ ա՛յ մեռնես ինձ, յանի ինչի՞ դ համար պիտի տանեմ ես քո ցավն ու մի բան էլ ավել՝ չոռը, լավի՛ տեղդ, քանի քեզ չեմ տարել...” ու Մառան ուզլ ընկած կատվի պես հետևում էր անցուդարձին , հոգու խորքում գղջու՛մ էր, գղջու՛մ...

Տղամարդկանց ոչ միայն սրտերի տիրակալ Ստելլան, տեսնելով բազում արական սեռի ներկայացուցիչների, իր սրբազան պարտքն էր համարել ներկա գտնվելու Վանիկի հողարկավորման արարողությանը : Նրա բացառիկ տոնական դիմահարդարանքը , որը բնավ թաղման հետ կապ չուներ, ասես իջել էր դոշերին՝ նկարելով մեկ այլ նեադրթայցու դեմք. կարծես թե մեկը բավ չէր : Պարզ էր հանրությանը կամքը Ստելլայի, բայց ոչ հիմա, թաղենք հետո՝ հանգիստ խղճով : Այրու դերը մեկ օրում բաբաթին յուրացրած Վանիկի կինը, որը մինչև դիակը բերելը հանգիստ լաված էր իրա համար, ամուսնուն տեսնելուն պես պոռթկաց...” Ի՛մ մարդ, ի՛մ Վանի՛կ, ի՛մ հեզ կողակից, ինչու՞ թողեցիր-հեռացար ինձնից, էլ ով կլինի ցավիս կարեկից” : Կեղծ էր մի տեսակ սուզը այդ կնոջ . իրականում , ո՞վ գիտե, գուցե բարկացած էր Վանիկի վրա՝ պարտքերը իր վզին դայաղ անելու համար : Շինծու թվաց ամենն իմ աչքին : Մի կուշտ փորով հաց ուտելու նպատակով հավաքված բիձեքը, մարդա 500 դրամով լացելու համար հավքված կնանիք, կողքի շենքի մուֆթա տեղը զիբարը բացած Գագո ձյան, շոգին եսիմինչ կերած-թունավորված ու ցավից վնգստացող Բոիթնի փիսիկը մի տեսակ հարամեցին Վանիկի թաղումը , որ չես ասի ոչ մի բառով....

Անկեղծ էր մենակ հենց ինքը՝ Վանիկը : Կյանքում երբևէ կոստի երես չտեսած այս հեզ արարածը իրեն արքա էր զգում հետմահու... Բջերի կողմից նկատվող նրա մեղմ ժպիտից կարելի էր կարդալ , որ դգել էին Վանիկին անգամ նրա սրաքիթ կոշիկները : Տարա՛ն Վանիկին , ու օրացույցից դարձյալ պոկվեց մի շո՛գ կիրակի, անտե՛ր կիրակի , անփո՛ղ կիրակի, դատա՛րկ կիրակի...

Իր պարտքը համարեց ու վերանորոգեց շենքի տանիքը...

Էսօր մեզ լքեց մեր շենքի ձյաձ Վանիկը...

Վարդավառ, կամ արի նենց ջրեմ գնաս տուն ,տնեցիք մրգեն-կամպոս սարքեն

Առավոտ էր, Մասսիվյան լուսապայծառ առավոտներից մեկը: Արևի առաջին ճառագայթների ներքո՝ Միշա պապիի բուդկայի սպիտակափառ գազաթը փայլում էր վարդագույն շողերով, որ այք էին շլացնում: Արագածի պսակաձև գազաթը չէր երևում, զի մեր մոտից ձև չի այն երևար ու դժվար թե նա այս շոգին-կրակին դեռ պատած լիներ ձյան ճերմակ մշուշով որպես մի ամոթխած հարսիկ, որը կսքողեր իր դեմքը անթափանցիկ շղարշով : Ու հե՛րն էլ անիծած, որ սա երգիս հետ կապ չունի, գաթոն ես գրել եմ այն, որ բռնի ... :D

Գեղեցիկ էր այս առավոտը : Շենքի անգյալ ժողովուրդը հավես չէր արել վաղ առավոտով զարթնել : Կարիք չկար. օրը կիրակի էր ու տոնական :

Ողջ գիշեր չէր քնել ու եղպես էլ արթուն էր մնացել միայն շենքի խաղաղության աղավնի, թաղի ամեն հարցերում ճիշտը որոշող, նախկինում դատապարտված ,այնուհետև ապաշխարած ու այժմ իրեն անմեղ ու ներված համարող եսիմ որ աղանդին պատկանող Նորիկը : Նախորդ օրը Նորիկը հավաքել էր շենքի ճժերին ու քարոզ էր կարդում նրանց գլխին այն մասին,որ այս տոնը բնավ մեր կրոնին չի պատկանում և հարիր չէ՝ քրիստոնյաներին նշել այն ինչպես երբևէ նշում էին մեր հեթանոս նախնիները ,ու որ հավուր պատշաճի չէ,որ մինչ օրս այս մասին նրանց ծնողները իրենց տեղյակ չեն պահել : Իմեննր մեր շենքի բնակիչներին բնորոշ զիլ բթությամբ օժտված երեխաները չէին հասկացել Նորիկի գրական բառապաշարը ,նրա “հարիր”-ներն ու “հավուր պատշաճի”-ները ու կարծելով թե ցնդած էակը քֆուր-քյաֆար է կապել՝ մարդ ա մի-մի հոգու դրգել էին Նորիկի վրա ատշտոսի: Նորիկը մինչև լուսածագ բոլոր այս թշվառ արարածների մեղքերի համար ապաշխարանք էր հայցում :

Քարոզը ստիպել էր ժողովրդին մի քիչ կաշկանդվել : Ոչ-ոք չէր հանդգնում առաջին քայլն անել ու մի լավ դիմացինին ջրեր .բոլորն իրենց համար լաված էին թթված դեմքերով :

Խիզախ գտնվեցին ու բակ դուրս եկան շենքի ամենաբամբասկոտ, բոլորի ոսկորները ոննտգենուրգիայի հմուտ բժիշկներից էլ լավ լվացող հայ երկու փափկասուն տիկնայք: Նրանց բամբ ձայնից միշտ էլ զրնգացել է մեր շենքը, ու թեկուզ,որ նրանք խոսեին շատ ինտիմ թեմաներից, մենք միշտ էլ ակամայից ունկնդրել էինք նրանց զրույցին: Էս անգամ զրույցը սկսվել էր Վարդավառի իսկական անունը որոնելուց: Տիկնանցից վեհագույնը՝ Միլվան , իր վեհ կարծիքը հայտնեց ու ասաց, որ տոնն այս ի սկզբանե կոչվել է Վարդեվոր ու դա գալիս է հին ժամանակներից,երբ յանի տղան աղջկան ջրելուց ինքն իրեն հարց է տվել. “ Մի՞ թե ես աղջիկը վարդ է, որ հլը ես էլ ջրում եմ սրան ” ու եղպես “Վարդե[վ]ո՞ր”-ը հասել է մեզ : Ու մինչդեռ Մարգոն չէր համաձայնվում Միլվայի վառ երևակայությունից ծնված տուպոյ ասույթի հետ՝ ի հայտ եկավ Կարինեն ու աղաղակեց ի լուր ողջ շենքի. “ Թարգե՛ք աղջկերք,ո՛չ Վարդավառ ա,ո՛չ Վարդեվոր, ո՛չ էլ՝ շատ իմանամ ինչ: Էսօր Ջրոցին ա հարևաններ ի՛մ, եկե՛ք վեդոռն վեդոռյին տանք ու մի լավ տժժցնենք ինչպես մեր պապերը տժժցրին երբևէ...” : Կյանքով լցված այս տիկնոջ խոսքերը ասես ոգևորեցին բնակիչներին համախմբվել շենքի թասիբի համար շատ կարևոր այս հարցի շուրջ : Ու ձեն ձենի տված՝ հավաքվեցին մեծերն ու փոքրերն իմ շենքի,որոնք իրենց հետ բերել էին շշեր բազում, վեդոռներ լիքը ու գույնզգույն , շլանգներ պարսկական ու մինչև անգամ

ղզղաններ տարբեր...

Երկար ժամանակ իրեն զսպած ամբոխը պոռթկաց հանկարծակի, ու սկսվեց ջրոցի նորպիսինը միայն իմ շենքում կարող էր լիներ: Մոռացած տարբեր վեճերի ,ջրաչափի արագ ֆոռացող սլաքների ու մնացած ամենի մասին՝ ժողովուրդը խառնվել էր իրար ու ցնձու մ էր,ցնձու մ ... Եթե ուզեին՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված -Ինչէ՛ր,ինչէ՛ր միայն չեն կատարի մեր շենքի բնակիչները գրգռված...

Ինտիլիգենցիայի վառ ներկայացուցիչ ու կապտարյունների դասակարգին պատկանող Անոյի դուստր Քրիստինան,որը միշտ աչքի էր ընկել բարձրաշխարհիկներին վայել իր վարքուբարքով, եկել էր կոֆեի բաժակով չգիտեմ ոնց հանրությանը ջրելու այլ կերպ լինել չէր կարող ,չէ՞ որ նա վեհ է :

Շենքի վրա անկապ տեղը քեն պահող Արև տատին էր անգամ մասնակցում այս տոնախմբությանը: Նրա քմծիծաղից ու բավարաված հայացքից կարելի էր հասկանալ,որ զզղանի պարունակությունը կակ մինիմում կեղտոտ ամանների ջուր էր ,ու այդ կայֆը առաջինը վայելեց շենքի մշտական յուրահատուկ քրտնահոտն ապահովող, Դարվինի տեսության ճշտությունը միանգամայն ապացուցող Արմենը,որի ոսկորներն ու մաշկը տարիներով ջրի երես չէին տեսել բնավ: Արմենը չզսպեց գայթակղությունն իր ու իսկույն նեթ բացականչեց. “Ամա՛ն, կայֆ...”, մտքում շարունակելով՝ “Էլի՛ , էլի՛ եմ ուզում ,Արև տատ, էլի՛ ...” :

Իսպանիային բալետ անող Սուրիկ պապին ու Հոլանդիայից եկած տարբեր տեսակի դրական լուրերի կողմնակից Վազգեն պապին, մոռանալով, որ պոածիվնիկ են իրար, ևս ուրախությամբ թրջվում էին՝ չնայած տարիքին ու իրենց առողջությանը սպառնացող բազում բացիլների : Խալիսի թաղերից բազում չուժակներ էլ էին միացել մեր այս միասնական տոնակատարությանը :Բացել էր սաղին մի տեսակ : Ես ջրում էի իմ հարևանությանը լոկ պատուհանից : “Անարդա՛ր է”,- գոչեց հարևաններից մեկը ... “Իջի՛ր Օֆ, կա յֆ ա”,-շարունակեց մյուսը , “Թե չիջնես՝ կգամ ձեր տանը կջրեմ,Օ՛ ֆ”,- անկապ բլթցրեց մեկ ուրիշը : Բայց ես չէի ուտում նրանցից և ոչ ոքի կուտը ու իմ գլոզերով իմ սև գործն էի անում :

Այդ պահին մեզ դուրեկան էր անգամ Ասոյի ավտոյից հնչած “Կայֆույեմ”-ը ,Արմենչիկի սինգլն ու Տատյանա Բուլլանովայի “վերջին” հիթերը :

Ու չնայած ,որ այս տոնը բնավ մեր կրոնի հետ կապ չուներ, ու որ երկնային կյանքում մենք գուցե արժանանանք բազում պատիժների, ու չնայած որ վաղը կամ մյուս օրը մեր հոգիներն ու մարմինները հարբուխի բացիլները կպարուրեն, մենք ուրախացա՛նք մի լավ, մենք ջրվեցի՛ նք մի լավ, ու ինչպես կասեր Կարինեն՝ մենք տժժցրի՛ նք մի լավ ինչպես երբևէ տժժցրին մեր նախնիները :

ՔՆՆՈՒԹՅԱՆՍ ՃԱՌԸ

Հարգելի Տիկին Համբարձումյան, ի՞նչ մեղքս թաքցնեմ, ես բնավ պատրաստ չեմ Ձեր քննությանը և անգամ չեմ պատկերացնում, թե ինչի մասին են ինձ տրված հարցերը : Սակայն ես ունեմ առավելություն, որն ամենքին չի տրված . ես կարող եմ տեղում երևակայել ու փիլիսոփայել վերոնշյալ հարցերի շուրջ՝ հորինելով զանազան ստեր, ապացուցելով նորանոր ... թեորեմներ և անգամ բացահայտելով տարբեր գյուտեր ձեր առարկայի շուրջ : Բացի դա՝ ինքս օժտված եմ համոզելու և հավատացնելու բացառիկ ունակությամբ՝ տակավին Եհովայի վկա չլինելով : Ես վառ գիտակցում եմ, որ դուք ողջ Ձեր կյանքը ձոնել եք գիտությանն ու անվերապահորեն նվիրվել եք “Աշխատանքային էկոնոմիկա” առարկային՝ ամբողջովին մոռանալով Ձեր անձնական կյանքի մասին : (Այսպիսով, եթե չեք կամենում Ձեր կյանքի մայրամուտին բացահայտել նորություններ ձեր առարկայի մասին, մեխանիկորեն դրեք իմ քննությունն ու հայտներ ինձ Ձեր իսկ երախտիքի խոսքը :

Հարգանքներով՝ Ձեր մասին հոգացող և միայն Ձեր լավը կամեցող Օֆելյա, 21 տարեկան, քաղաք Երևան ♥

Զրույց դեկանատում դասախոսներիս միջև.

1 դասախոս

-Մի հատ ուսանողուհի ունեմ, Օֆելյա ա անունը, սաղ տարին դասի չէր գալիս, երբ էլ գալիս էր՝ մենակ չաչանակում էր : Էսօր մոտս քննության էր : Ասեց թե բա նոր եմ եկել մեղրամսից, չեմ հասցրել պարապեմ, խնդրում եմ դրեք...

Նենց էլ երջանիկ էր դեմքի արտահայտությունը. զգացվում էր, որ իրար սիրող գույգ են ու լավ է... լ ուրախացել են ջահելները : Դրեցի՝ գնաց... Այ մարդ, թքա ծ, թող երջանիկ լինեն... :))) ♥

2-րդ դասախոս

-Լսի՛, մի տենց ուսանողուհի էլ ես ունեմ . սաղ տարին դասի չէր գալիս, երբ էլ գալիս էր՝ մենակ շաղակրատում էր ... Վայ թե՛ էլի Օֆելյա էր անունը : Մի քանի օր առաջ քննության էր մոտս. ասեց թե բա հղի եմ, ծանր եմ տանում ու բնավ պարապելս չի գալիս... Թե կարող եք՝ դրեք գնամ... արդեն վատ եմ, շունչս էլ չի հերիքում... :Օ

Պահի տակ նենց էր գույնը գցում խեղճ աղջիկը : (Ես կարծեցի, թե հեսա մի բան կլինի, կմնա վրես : Դրեցի՝ գնաց : Այ մարդ, հե՛ ըն էլ անիծած, թո՛ղ դ

առողջ լինի, ջահել աղջիկ ա :

3-րդ դասախոս

-Կոլեգաներ, չմտածեք թե չեմ ուզում ձեզանից հետ մնամ ու դրա համար եմ պատմում, բայց , անկեղծ ասած, մի Օֆելյա անունով ուսանողուհի էլ ես ունեմ ձեր ասածի պես... Սաղ տարին դասերիս ժամանակ մենակ ծիծաղում էր:

Քննությունից ուշացավ ահագին, ես էլ արդեն դուրս էի գալիս... Գիտեք իմ խստությունը : Ահագին խոսեցի վրան, տոմսը դեմ տվեցի ու որոշեցի ապացուցել նրան, որ վերջում ծիծաղացողն է ծիծաղում : Բայց որ չսկսեց պատմել իսկությունը, իսկույն սիրտս լցվեց : '(Պատկերացնում եք՝ խեղճ աղջկա երեխեն սաղ գիշեր հագում ա... Ինքն աշխատում ա , ամուսինն էլ Հայաստանում չի : Մենակ ա ապրում... Դրեցի՝ գնաց... թող լավ լինեն այ մարդ :(

Թագա սցենարներ եթե ունեք՝ առաջարկեք... Առջևում դեռ 3 քննություն կա :D

[Վիրտուալ յարս...](#)

Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտները ամիսներ շարունակ դիմավորում էի ուռած աչքերով, որովհետև քնում էի ընդամենը 3, կամ քարը տրաքի՝ 4 ժամ և հակառակ դրան՝ երջանիկ էի ու զվարթ: Պատճառը հասարակ անքնությունը չէր, որը խորանալով, բացասական ազդեցություն կունենար իմ առողջության վրա, այլ ավելին էր, քան ...

Երբ օրեցօր հասկանում ես, որ Նրա հասարակ, վիրտուալ «բարև»-ից կարող է գիշերդ առավոտ թվալ ու լուսածագին, լուցկիներով մի կերպ կոպերդ ձգած, ցանկանում ես շարունակել քո մտերմիկ գրույցը նրա հետ՝ հողաթափիկ ինֆուգորիայի գոյության կամ, չգիտես ինչու, դրա և այլ միաբջիջ նախակենդանիների ՕԳԳ-ի մասին, երբ քեզ կարոտում են շրջապատում, ու դու գրեթե չկաս քո ռեալ կյանքում, ապա դա սոսկ անքնությունը չէ, որ պարուրել է քո հոգին:

Այս ամենը պատահեց ինձ հետ: Ես, որ անլուրջ էի համարում վիրտուալ բոլոր «գոյակցությունները»... սակայն, ինչպես կասեին ազգիս քյարթու տղաները, չես իմանա, մինչև հաստատ չիմանաս... Կարճ ասած, վիրտուալը ինձ տարավ: Չէ, վիրտուալս, յարս, ինձ տարավ...

Գուցե տարիներ հետո ժամանակի խոշոր գրողների հիմնական թեման միայն վիրտուալ տեսակի սիրո կամ ընդհանրապես վիրտուալ գոյության մասին լինի, բայց գոնե հիմա դրա ծագումնաբանության ու գոյության մասին ոչ մի խելամիտ ակնարկ չկա (եթե այդպիսիների մասին տեղյակ ես, մի՛ հապաղիր, աչքս մտցրո՛ւ):

Բայց հաշվի առ, որ վիրտուալ սերդ կարող է անհանալ այնպես, ինչպես կանհանա ինտերնետ կապը, եթե չվճարես դրա վարձը ճիշտ ժամանակին:

Ինձ մոտ, համենայն դեպս, մի բան կար ու դա զգացնել էր տալիս իր գոյության մասին : Իրողությունն առաջինը նկատեց, ու դրա մասին բարձրաձայնեց նախնիս՝ տատս՝ ասելով, թե բա . «Բալես, աչքիս սիրահարվել էս, մենակ չեմ հասկանում, էդ ժեշտի տուփին էս սիրահարվել, թե՞ ոնց: Էդ սաղ հե՛ չ, բա ո՞նց եք երեխեք ունենալու»:

Ճիշտ էր տատս այնժամ, թե՞ ոչ, չգիտեմ, բայց օրեցօր ավելի էի տարվում Նրանով: Մեր առաջին համբույրը, որն իրենից ներկայացնում էր վերջակետի և աստղանիշի համակցություն, ինձ թներ տվեց ճախրելու դեպի վեր: Ես միայն իմ ֆիզիկական գոյությամբ էի ներկա ընկերներին շրջապատում, այլապես՝ էս ուրիշի փարթիները չէի ուզում, ինձ համար իմ վիրտուալ յարը թա՛նկ էր, թա՛նկ: Ու Նրա ամեն մի լայքից, քոմմենթից կամ ինքնակամ նամակից՝ էս ոգևորվում էի այնքան, որ եթե էս լինեի աշուղ՝ կգրեի հազար ու մի տաղ, իսկ թե պոետ լինեի մի ռոմանտիկ՝ գրքերի հատորների մի ողջ ընտրանի, սակայն էս ո՛չ մեկն էի , ո՛չ էլ մյուսը. գրողը տանի՛ ...

Երբ միայնակ էի էս լինում, մկնիկն իմ Նրա ֆեյսբուքյան փրոֆայլն էր հա տանում, ու հնացած Նրա փոստերում էս քոմմենթներ էի հա անում ... Սակայն որքա՛ն մեծ էր ցանկությունը առանց IP-ների կեղծ քաղաքականության՝ Նրա իսկ IP-ից պատասխանել բոլոր նամակներին կամ քոմմենթներին : Իմ մտացածին աշխարհում ստեղծված Նրա կերպարն այնքան ցանկալի էր ու իդեալական, որ ավելի ու ավելի էր մեծանում Նրան տեսնելու անհագ ցանկությունը:

Երագումս շատ հաճախ էի տեսնում նրան: Թեպետ երբեք չէի տեսել նրան իրականում, սակայն համոզված էի, որ երագս մի օր կիրականանա, ու մենք միասին կքայլենք ճառագայթների պես ձգվող փողոցներում: Ապագա երագիս տեսլականը, բախվելով չգիտեմ ինչերի հետ, ինձ ապացուցում էր, որ չնայած իմ կյանքի առաջընթաց քայլերին, էս միևնույն է կախված էի Նրա հերթական մեսսիջից : Եվ այդպես երկար ժամանակ մենք “սիրում” էինք իրար վիրտուալում, ռեալ կյանքում երբևէ հանդիպելու ցանկություն չարտահայտելով:

Գուցե՞ վախ կար՝ հանդիպելուց հետո կոտրել այն երագի նախատիպը, որը կերտել էինք երկուսով՝ մեր երևակայական աշխարհներում, կամ գուցե՞ վիրտուալ տեսակի ցանկացած սեր պետք է մնա միայն վիրտուալում և ոչ ավելին: Ու մինչ օրս էլ էս լուսնոտի պես արթնանում ու Նրա փոստերն եմ փորփրում : Ես իմ երագն եմ կորցրել Նրա ցանկալի փրոֆայլում...

Նայում եմ ավատարիդ
Քո չքնաղ պատկերին,
Միայն ավատարդ ինձ մնաց,
Desktop-իս հուշ դարձավ:D